ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- փետրվարի 2021 թվականի №-Ա
քաղ. Երևան

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՐԳԱՎԱՆԴ-ՇԻՐԱԿԻ, ԲԱԲԱՋԱՆՅԱՆ-ԱՇՏԱՐԱԿԻ ԵՎ ԴԱՎԹԱՇԵՆ-ԱՇՏԱՐԱԿԻ ՄԱՅՐՈՒՂԻՆԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՀԱՀԱՏՎԱԾՆԵՐՈՒՄ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) որ «Կավկասուս Ռոուդ Պրոջեքտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Դիմող անձ) 2021 թվականի հունվարի 20-ին դիմել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերություն (այսուհետ՝ Ընկերություն)՝ Երևան քաղաքի Արգավանդ-Շիրակի, Բաբաջանյան-Աշտարակի և Դավթաշեն-Աշտարակի մայրուղիների ճանապարհահատվածներում շինարարական աշխատանքներն իրականացնելու համար անհրաժեշտ սպառման համակարգերը (այսուհետ՝ Սպառման համակարգեր) էլեկտրական ցանցին միացնելու խնդրանքով, հայտնելով, որ չի կարող ներկայացնել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշմամբ հաստատված էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների (այսուհետ՝ Կանոններ) 13.2-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված փաստաթուղթը, քանի որ վերջինս շինարարական կազմակերպություն է և իրականացնում է պետական նշանակության ճանապարհների շինարարություն,

բ) Ընկերության 2021 թվականի փետրվարի 4-ի №04-ԴԳ-02/136 և Դիմող անձի 2021 թվականի փետրվարի 1-ի գրությունները, որոնց համաձայն՝ վերջիններս առարկություն չունեն Սպառման համակարգերն էլեկտրական ցանցին միացումը սույն որոշմամբ սահմանված ընթացակարգով իրականացնելու վերաբերյալ,

և հիմք ընդունելով Կանոնների 13.8-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ Սպառման համակարգերի էլեկտրական ցանցին միացումն իրականացվում է Կանոնների 14.4-րդ կետով սահմանված կարգով տեխնիկական պայմաններ տրամադրելու միջոցով՝ առանց կանոնների 13.2 կետի 5-րդ ենթակետով պահանջվող փաստաթուղթը ներկայացնելու:

2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ չի թույլատրվում Դիմող անձից պահանջել կատարել վճարումներ, տրամադրել հատուցում, ներկայացնել տեղեկատվություն և փաստաթղթեր կամ նրան ծանրաբեռնել պարտավորություններով, եթե դրանք սահմանված չեն էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններով, այլ նորմատիվ իրավական ակտերով, սույն որոշմամբ կամ էլեկտրամատակարարման պայմանագրով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Դիմող անձին և Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- փետրվարի 2021թ.